



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ԲԴԽ-40-Ո-105
2018թ.**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՊԱՆՁՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ
ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՊԱՆՁՆԱՎՈՐՄԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 10-րդ մասը, 94-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Սահմանել դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման կարգը՝ համաձայն 1-ին հավելվածի:

2. Սահմանել անձնական տվյալների ապանձնավորման այլ դեպքերը՝ համաձայն 2-րդ հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2018թ. սեպտեմբերի 27
ք. Երևան

ԿԱՐԳ

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՊԱՆՁՆԱՎՈՐՄԱՆ

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 10-րդ մասով և 94-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված՝ հրապարակման ենթակա և անձնական կյանքի, կենսաչափական և հատուկ կատեգորիայի անձնական, ինչպես նաև երեխայի անձնական տվյալներ (այսուհետ միասին՝ Անձնական տվյալներ) պարունակող դատական ակտերը և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումները (այսուհետ միասին՝ Դատական ակտեր) դատական իշխանության պաշտոնական՝ www.court.am կայքում հրապարակվում են ապանձնավորված՝ սույն կարգին համապատասխան:

2. Հրապարակման ենթակա այն Դատական ակտերը, որոնք չեն պարունակում օրենսդրությամբ սահմանված ապանձնավորման ենթակա Անձնական տվյալներ կամ պարունակում են հանրամատչելի անձնական տվյալներ, բացառությամբ սույն որոշմամբ սահմանված տվյալների, ենթակա չեն ապանձնավորման:

3. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի պահանջների շրջանակում սույն կարգին համապատասխան ապանձնավորվում են ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ Անձնական տվյալները՝

1) անձնագրի, նույնականացման քարտի կամ անձի ինքնությունը հաստատող այլ փաստաթղթի, ինչպես նաև անձի վերաբերյալ առևտրային, հարկային, բանկային, ապահովագրական, ծառայողական, կրոնական, կուսակցական, էթնիկ, ռասսայական, կրթական և բժշկական տվյալներ պարունակող փաստաթղթի համարը և սերիան,

2) հաշվառման և/կամ բնակության վայրի հասցեները,

3) հեռախոսի, ֆաքսի և էլեկտրոնային փոստի համարները և հասցեները,

4) բանկային, ապահովագրական և այլ հաշվեհամարները,

5) անշարժ գույքի գտնվելու հասցեն, կադաստրային ծածկագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի համարը և սերիան,

6) ավտոմեքենայի համարանիշը, տրանսպորտային միջոցի նկատմամբ իրավունքի պետական գրանցման (հաշվառման) վկայականի (վկայագրի) համարը և սերիան,

7) քրեական գործերով՝ տուժողի, վկայի և ընթերակայի անունը, ազգանունը, հայրանունը,

8) քաղաքացիական, վարչական և սնանկության գործերով՝ վկայի անունը, ազգանունը, հայրանունը:

4. Հրապարակման ենթակա դատական ակտում դատավարության մասնակցի՝ Բարձրագույն դատական խորհրդին ուղղված դիմումի հիման վրա կարող են ապանձնավորվել նաև օրենսդրությամբ սահմանված՝ ֆիզիկական անձանց վերաբերյալ Անձնական տվյալ հանդիսացող այլ տեղեկություններ:

5. «Դատական համակարգ» համակարգչային ծրագիրն ավտոմատ կերպով դատական ակտի տեքստում նույնականացնում և ապանձնավորում է սույն կարգում նշված ապանձնավորման ենթակա Անձնական տվյալները՝ պահպանելով ապանձնավորման գործընթացին ձեռքով միջամտելու հնարավորությունը: Նշված ծրագրի միջոցով ապահովվում է նաև ավտոմատացված եղանակով դատական իշխանության պաշտոնական կայքում ապանձնավորված կերպով դատական գործի և դրա ընթացքի հրապարակումը:

6. «Դատական համակարգ» համակարգչային ծրագիրը պետք է ունենա համապատասխան ծրագրային հնարավորություններ՝ Անձնական տվյալներ պարունակող և ապանձնավորված դատական ակտերը սկզբնական՝ առանց ապանձնավորման տեսքով ցույց տալու համար:

7. Անձնական տվյալներ պարունակող և ապանձնավորված՝ դատական ակտերին սկզբնական՝ առանց ապանձնավորման տեսքով ծանոթանալու իրավունք ունեն Բարձրագույն դատական խորհրդի անդամները, գործը քննող դատավորները, Դատական դեպարտամենտի ղեկավարը և նրա որոշմամբ՝ Դատական դեպարտամենտի այն ստորաբաժանումների ղեկավարները և աշխատակիցները, որոնց գործառույթների պատշաճ իրականացումը պահանջում է դատական ակտերի տեքստերին ծանոթանալու անհրաժեշտություն:

8. Անձնական տվյալներ պարունակող և ապանձնավորված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներին սկզբնական՝ առանց ապանձնավորման տեսքով ծանոթանալու իրավունք ունեն Բարձրագույն դատական խորհրդի անդամները, Դատական դեպարտամենտի ղեկավարը և նրա որոշմամբ՝ Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուցվածքային այն ստորաբաժանումների ղեկավարները, որոնց ղեկավարած ստորաբաժանումների գործառույթների պատշաճ իրականացումը պահանջում է Բարձրագույն դատական խորհրդի որոշումների տեքստերին ծանոթանալու անհրաժեշտություն:

9. «Դատական համակարգ» համակարգչային ծրագիրը պետք է ունենա համապատասխան ծրագրային հնարավորություններ՝ սույն կարգի 8-րդ և 9-րդ կետերում նշված անձանց կողմից Դատական ակտերին սկզբնական՝ առանց ապանձնավորման տեսքով ծանոթանալիս ֆիքսելու և գրանցելու ծանոթացման յուրաքանչյուր դեպք և միաժամանակ բացառելու այլ անձանց կողմից Դատական ակտերին սկզբնական՝ առանց ապանձնավորման տեսքով ծանոթանալը:

10. Անձնական տվյալներ պարունակող և ապանձնավորման ենթակա դատական ակտում, ինչպես նաև դատական գործի և դրա ընթացքի վերաբերյալ հրապարակվող տեղեկություններում ապանձնավորումն իրականացվում է հետևյալ ձևերով՝

1) Սույն կարգի 3-րդ կետի 1-ից 6-րդ ենթակետերում նշված տվյալները ենթակա են փակման: Անձնական տվյալները նշվում են սև գույնի քառակուսիներով: Ընդ որում, նշված քառակուսիների վրա հայտնվում է հաղորդագրություն այն մասին, որ տեղեկատվությունը Անձնական տվյալ է հանդիսանում:

2) Սույն կարգի 3-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերում նշված տվյալները ենթակա են փոխարինման: Անձնական տվյալի յուրաքանչյուր բառային միավոր փոխարինվում է հայերեն մեծատառով՝ տառի պատահական ընտրության սկզբունքով:

11. Անձնական տվյալներ պարունակող դատական ակտի ապանձնավորում իրականացրած դատավորին կցվող դատական ծառայողը պատասխանատու է Անձնական տվյալներ պարունակող դատական ակտի ապանձնավորման լրիվության և ճշտության համար:

12. Դատական ակտում առկա Անձնական տվյալների ապանձնավորման նկատմամբ հսկողությունն իրականացնում է տվյալ ակտն ընդունող դատավորը:

13. Դատական ակտում առկա Անձնական տվյալների ապանձնավորում իրականացրած դատավորին կցվող դատական ծառայողը դատական ակտի ապանձնավորված վերջնական տեքստը ներկայացնում է դատավորին:

14. Դատավորի կողմից դատական ակտում թերություններ հայտնաբերելու դեպքում այն վերադարձվում է և իրականացվում Անձնական տվյալների լրացուցիչ ապանձնավորում՝ խմբագրման միջոցով, իսկ թերությունների բացակայության դեպքում դատավորի ցուցումի հիման վրա դատական ակտի բովանդակությունը, Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված՝ Դատական գործի վիճակագրական քարտի լրացման կարգին համապատասխան մուտքագրվում է «Դատական համակարգ» համակարգչային ծրագիր:

15. Հրապարակման ենթակա դատական ակտերի ապանձնավորումն ու հրապարակումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված՝ հրապարակման ժամկետների պահպանմամբ:

16. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշման ընդունումից հետո, այն փոխանցվում է Դատական դեպարտամենտի՝ դատական իշխանության պաշտոնական կայքում տեղեկություններ տեղադրող իրավասու ստորաբաժանման ղեկավարին՝ ձեռքով Անձնական տվյալների ապանձնավորում իրականացնելն ապահովելու նպատակով:

17. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշման տեքստում սույն կարգի 3-րդ կետի 1-ից 6-րդ ենթակետերում նշված տվյալները ենթակա են փակման՝ Անձնական տվյալները նշվում են սև գույնի քառակուսիներով: Ընդ որում, նշված քառակուսիների վրա հայտնվում է հաղորդագրություն այն մասին, որ տեղեկատվությունն Անձնական տվյալ է հանդիսանում:

18. Բարձրագույն դատական խորհրդի որոշման Անձնական տվյալների ապանձնավորված տեքստը ներկայացվում է Բարձրագույն դատական խորհրդին՝ համաձայնեցման նպատակով և վերջինիս արձանագրային որոշմամբ Բարձրագույն դատական խորհրդի որոշման ապանձնավորված վերջնական տեքստը հրապարակվում է դատական իշխանության պաշտոնական կայքում:

19. Դատական դեպարտամենտի իրավասու ստորաբաժանման ղեկավարը պատասխանատու է Բարձրագույն դատական խորհրդի որոշման մեջ առկա Անձնական տվյալների ապանձնավորման լրիվության և ճշտության համար:

20. Բարձրագույն դատական խորհրդի որոշման ապանձնավորման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Բարձրագույն դատական խորհուրդը:

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՊԱՆՁՆԱՎՈՐՄԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐԸ

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերից բացի, հրապարակման ենթակա դատական ակտերի ապանձնավորումն իրականացվում է նաև այն դեպքերում, երբ դրանք պարունակում են հետևյալ անձնական տվյալները.

1) օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության և հանրային ծառայության վերաբերյալ այնպիսի տեղեկություններ, որոնք կարող են թույլ տալ նույնականացնելու վերը նշված ծառայություն իրականացնող զինծառայողին կամ հանրային ծառայողին:

2) ֆիզիկական անձին պատկանող գույքի վերաբերյալ այնպիսի տեղեկություններ, որոնք կարող են թույլ տալ նույնականացնելու տվյալ ֆիզիկական անձին:

2. Դատական ակտերում վերը նշված անձնական տվյալների ապանձնավորումն իրականացվում է սույն որոշման Հավելված 1-ով սահմանված կարգին համապատասխան:

3. Դատական ակտում առկա բոլոր անձնական տվյալների ապանձնավորումն իրականացվում է համապատասխան համակարգչային ծրագրի միջոցով՝ ձեռքով ապանձնավորելու (տվյալները փակելու կամ փոխարինելու) եղանակով՝ մինչև ապանձնավորման ծրագրային միասնական համակարգի ներդրումը, որից հետո ապանձնավորումն իրականացվելու է ավտոմատացված եղանակով: